ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
(ԱՐՄՍՏԱՏ)

«____» _____ 20____ թ. №

Ձեր «____»_____ 20____ թ. №

[illegible]ցիայի ազատության կենտրոնի
նախագահ Ծուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 28.02.2020թ. թիվ 344-96 գրության, սույնով տեղեկացվում է Ձեզ առայն, որ Վիճակագրական կոմիտեն Ձեր կողմից հայցվող տեղեկատվությունը չի կարող տրամադրել, քանի որ վերջինս պարունակում է վիճակագրական գաղտնիք հանդիսացող անվանական տեղեկատվություն: Այն ենթակա չէ տրամադրման «Վիճակագրական գաղտնիության և բացառապես վիճակագրական նպատակներով օգտագործման» սկզբունքի համաձայն, որն ամրագրված է «Պաշտոնական վիճակագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում: Հիշյալ կետով սահմանված է, որ պաշտոնական վիճակագրությունն արտադրողների կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերող՝ հավաքված կամ ստացված բոլոր անվանական տվյալները խիստ գաղտնի են և կարող են օգտագործվել բացառապես վիճակագրական նպատակներով:

Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվանական տվյալները, որոնց վրա տարածվում է վիճակագրական գաղտնիության սկզբունքը, այն տվյալներն են, որոնք թույլ են տալիս կամ կարող են թույլ տալ ուղղակի կամ անուղղակի

ք. Երևան, 0010
Հանրապետության
պողոտա,
Կառավարական 3շենք
☎: (+37411) 52-42-13, Ֆաքս: (+37411) 52-19-21
էլ. փոստ: info@armstat.am
https://www.armstat.am, http://www.armstatbank.am

նությունականացնել վիճակագրական միավորները՝ դրանով բացահայտելով անվանական տեղեկություններ: Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պաշտոնական վիճակագրության բոլոր արտադրողներն ապահովում են անվանական տվյալների, գաղտնի գրանցված ցուցանիշների և վիճակագրության պաշտպանությունը,ինչպես նաև վիճակագրության պաշտպանությունը մինչև դրա տարածումը, և ձեռնարկում են անհրաժեշտ կարգավորիչ, վարչական, տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ՝ կանխելու այդպիսի տվյալներին հասանելիությունը լիազորություն չունեցող անձանց կողմից: Վիճակագրական նպատակներով հավաքված անվանական տվյալները չպետք է օգտագործվեն որևէ մարմնի կամ միջազգային կազմակերպության կողմից՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց առնչվող հետաքննության, նախաքննության, վերահսկողության, դատաքննության, վարչական որոշումների կայացման կամ նմանատիպ այլ գործընթացներում:

Հիշատակված դրույթները խարսխված են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) վիճակագրական հանձնաժողովի կողմից 1994 թվականի ապրիլի 14-ին ընդունված (29.01.2014թ. ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից վերահաստատված, 68/261-րդ բանաձև) ՄԱԿ-ի «Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներից»6-րդ սկզբունք իվրա, համաձայն որի՝ «Վիճակագրական *տեղեկատվության պատրաստման համար վիճակագրական գերատեսչությունների կողմից հավաքագրվող անհատական տվյալները, անկախ այն*

հանգամանքից, թե դրանք վերաբերում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, պետք է կրեն խիստ գաղտնի բնույթ և օգտագործվեն բացառապես վիճակագրական նպատակների համար»: Նշված դրույթները պարտադիր են ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների համար:

Հարգանքով՝

Նախագահի
փոխարինող
Գ.Անանյան

X

Կատարող՝ Ա.Հարությունյան

հեռ.(011)523965